

մեր աշխարհային երեւակացութեան
Լատուծմէն և կամ հին օրինաց Լա-
տուծմէն միշտ շփոթ պատկեր մի կը
գոյանայ և կ'աղակերպէ, կ'աղափոխէ
Լեւոնարանաւ յայտնուած և քա-
րազուած ճշմարիտ Լատուծոյ խելա-
կան և կատարեալ պատկերն :

(Շարունկ-ի-ն)

ՄԵՐ Եկեղեցական երգեցողու-
թիւնն, կամ, աւելի պարզ ասել, մեր
քրիստոնէական աստուածապաշտու-
թեան նուագաւոր աղօթքն ու փառա-
բանութիւնն օր աւուր խանգարուե-
լու վերայ է : Այն աղէտալի աղաւա-
ղութեան պատճառն մի կողմէն Ազ-
գային եկեղեցական Վարչութեան ան-
հոգութիւնն է և միւս կողմէն, երա-
ժշտական տգիտութեան հետ, կամա-
հաճ ոմանց անձնապատան յանգրդ-
նութիւնն, որք իւրեանց ձայնի, մերթ-
լալական և մերթ զօտական գեղգե-
ղանքներուն ասպախնելով, քան թէ
երաժշտական ուսման կանոնաց եւ
նախնական երգեցման եղանակին, կ'աշ-
լայեն, կը քաշքշեն, կը խեղաթիւրեն
եւ կ'անշքայեն մեր ժամակարգու-
թեան պարզ ու վսեմ երգերն, սրտա-
խօս ու սրտագրաւ նուագներն և ըն-
տիր ընտիր շարականներն, ստեղծներն
ու մեղեգիներն, որով եւ մեր աստ-
ուածապաշտութեան սրբափայլն առա-
ւել փայնասունի և զօսափայլի խառ-
նաշփոթ տեսարան կը դարձնեն, քան
թէ տուն աղօթից եւ տեղի մտախոհ
եւ ջերմեռանդն երկրպագութեան :
Կարի մեծ վիշտ է այն աղաւաղումն
երկեղած սրտերու և եկեղեցոյ ի-
րական փառաց նախանձախնդիր ոգի

ներու համար, բայց խիստ սակաւա-
թիւ և համարեալ թէ մատնանիշ առ-
նելու չափ հազուադիւս են այն ան-
ձինքն, որք գործնական կերպիւ կը ջա-
նան առաջն առնուլ այն վնասակար
խառնաշփոթութեան : Այս հազուա-
դիւս անձանց առաջինն կը համարուի
իրաւամբ Պ. Եղիա Տնտեսեան, որ
դանտղան հասուն յօգուածներով, բա-
նի մի տարիներէ ՚ի վեր, այն խնդիրն
լրագրաց մէջ յուզելէն զկնի՝ այսօր ևս
իւր ԵԿԵՂ.ԵՑԱԿԱՆ ԵՐԳԵՑՄՈՒՆՔ
վերնագրով յայտարարութիւնն կը հը-
րատարակէ պատուական Մատիսի 1368
և 1339 թիւերուն մէջ, յորմէ և մեր
առնելով ուրախութեամբ կը հաղոր-
դեմք մեր ընթերցողաց, ցաւելով ընդ-
նմին, որ հեռուորութեան աւթիւ-
անկարող ենք, իւր նոր աշխատասի-
րութիւնն, տարագրութենէն առաջ,
տեսնել, գիտել և անկեղծաբար մեր
գիտողութիւնքն անձամբ իրեն հա-
ղորդել :

ԵԿԵՂ.ԵՑԱԿԱՆ ԵՐԳԵՑՄՈՒՆՔ

Մեր ազգային եկեղեցական երգոյ
ներկայ անկերպարան վիճակին վրայ
քանիցս անգամ հրապարակաւ խօս-
ուած ըլլալով, ներկայ յօդուածիս նը-
պատակն այս մասին մանրամասն տե-
ղեկութիւններ հրատարակել չէ, այլ՝
գործնական արգիւնք մը ներկայացնել
ընթերցողաց, և անոր վրայ քանի մը
տեղեկութիւն հրատարակել :

Մեր եկեղեցական երգոյ ներկայ
վիճակին մէջ, անոնց ճիշդ եղանակնե-
րը գտնել և ՚ի գիր առնուլն որչափ
ալ անհնարութեան մօտ գժուարու-
թիւն մ'է, սակայն բաղմօրեայ փոր-
ձերով ու հետախուզութեամբ հա-
ւաքած մեր տեղեկութիւններն հա-
մարձակութիւն տուին մեզ՝ որ Շարու-

կանի երգերը ամբողջ ձայնագրերու ձեռնարկներ ^(*), որն որ ասիէ երկու տարի յառաջ (1870) աւարտեցինք, բայց հրատարակութիւնն այլ և այլ պատճառներով յատուկեցաւ ցարդ:

Նախ եւ յառաջ հարկ է որ այս խնդրոյս վրայ մեր արդէն հրատարակած մէկ քանի հատուածներն յիշեցընենք աստ համառօտիւ, որպէս զի ընթերցողներէն անոնք՝ որք այս երկովիս վրայ որոշ դադարի որ մ'առնուլ կուզեն՝ կարենան զանոնք աչքէ անցնել եւ ըստ այնմ մեր ներկայ առաջ արկը դատել: Նախ՝ «Քաղաքականութիւնն ընդ ազգաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ» անուն տետր մը Եւրոպական ձայնագրութեամբ, ասոր դէմ նամակ մը Ժամանակ Հանդէսի 35 թուոյն մէջ, և դարձեալ նոյն Հանդէսին 33 թուոյն մէջ սոյն տետրին պաշտօնականութեամբ տատախան մը վերոյիջեալ նամակին: Երկրորդ, Ժամանակ Հանդէսի 45 թուոյն յաւելումով, «Շարականի երգաց խաղերուն և նոյս զօրութեանը վրայ տեսութիւն» մը, նոյն Հանդէսի 45 թուոյն մէջ ասոր դէմ՝ հատուած մը, եւ Մեղու հանդէսի 243 թուոյն մէջ պատասխան մը ի պաշտօնականութիւն մեր տեսութեանց: Երրորդ, Ռօն ամսագրերին (1867) թիւ 6, 7, 8, 9, Ազգային երաժշտութիւն վերնագրով հատուածներն:

Ձառներ յիշեցնելէ զինի, գալով մեր ձեռնարկութեանը վրայ արուելք տե-

(*) Այս գործին ուրիշներ ալ կարելի է որ ձեռնարկած ըլլան, բայց ամենցմէ՝ հանդուցեալ Պալեան Արարչի տակրայի պաշտօնականութեամբ եւ դո՛ւր միայն ի մօտայ ծանօթ է մեզ, որ թէեւ մեծ գործ մ'է, սակայն մէկ երգողի և մէկ ող ձայնագրող՝ այսինքն միայն երկու անձի կարծիք է, եւ չունին այն քննական ոճը՝ որ անհրաժեշտ է այսպիսի ձեռնարկութեան մը համար, միանգամայն, ինչպէս կը նշանորդի ձայնագրողը քիչ շատ յանդուգն խորքեր ըրած է՝ մեր եղանակները տաճիական եղանակաց վերայ արդարեւ:

զեկութեանց, հարկագրած ենք ըսել որ, կարծեա ի նպատակ մեր դեռ չէր տանք այնպիսի գրութիւն մը որ կարող լինէր հիմնապէս փոխփոխել մեր կարծիքը, քան զոր հրատարակած էինք ցարդ: Աւտի, ինչպէս ըսինք, առանց մեր առաջին կարծիքը փոխիտել կարենալու, միայն քանի մը ամփոփումներով՝ ձեռնարկեցինք սոյն գործին, զոր օրինակ, խաղերու գրութիւնը մեր նախընթաց տեսութեան համաձայն պահեցինք բայց ի քանի մը այնպիսի տեղերէ յորս օտար և անտեղի գրութիւն մը կար, ինչպէս Յարութեան Ա. 4, հարցերուն վերջինը՝ «Անհրանելիդ Աստուած» երգը Ա. 4, երգերու ընդհանուր օրէնքին յարմարեցինք, որ ըստ ինքեան անհնարութիւն գաշնակ մը ունէր, նոյնպէս և «Անձինք նուիրեսդք» երգը տաղեր գրութեան ընդհանուր օրէնքին յարմարեցնելով՝ ամեն տուն մի և նոյն եղանակի վերածեցինք, և այսպիսի դէպքերու մէջ միայն խաղերու կարգը փոխեցինք աւելի հաստատ ձեւի մը փոխադրելու համար, իսկ այն տեսակ երգերն՝ որոց ամեն հատուածին մէջ միօրինակութիւն մը կար, նոյնը պահեցինք և յարգեցինք, ինչպէս կերելի և մեր տեսութեանց մէջ, սոյն միօրինակութեամբ՝ երգերուն երկու հինգերորդը պակսեցան, այսինքն շատ մը երգեր գրեթէ ճիշդ մի և նոյն եղանակի վերածեցան, ինչպէս որ էին ալ իրօք, և տարբերութիւններն ալ միայն աղաւաղութենէ յառաջացած էին:

Ասկից ալ բացայայտեցաւ՝ թէ և ըստ մասին խաղերու այն շարայարութիւնը, որով մի և նոյն խաղ եթէ ոչ ամեն տեղ՝ գոնէ նմանօրինակ տեղեր մի և նոյն գրութեամբ կը գործածուի, ինչպէս կը տեսնուի Գ. 2, երգաց «Այսօր ի կատարումն», «Որ զօրէնս ար-

բութեանն և այլոց, և Ա. Կ. երգոց
«Որ նախիրմաց», «Արեգական արդա-
բութեանն և այլոց մէջ, որ սոյն օրի-
նակ երգոց վրայ շատ շարահանոցներու
մէջ երկար, պարոյկ և այլն խառն ի
խուռն գրութեամբ կը գտնուէին:

Սոյն սծը ուրիշ գիւրութիւն մը
եւս տուաւ մեզ. զօրօրինակ, մեք եր-
գոց կարգերը Աջ եղանակէն սկսելով
շարունակեցինք, ուստի շատ մը եր-
գեր ինչպէս Աջ եղանակէն «Ուրա-
խացիր եկեղեցի», և Պայծառացիր»
հարցերը և նմանները, Այ եղանակէն
«Որ նախիրմաց», «Խորհուրդն ան-
ճառ», «Արեգականն արդարութեմ»,
երգերը և նմանները, Բայ եղանակէն
«Որ պատուիրան», «Իմաստուն կու-
տանքն», «Փարսաւոն հանդերձ կա-
ռօքն» երգերը և նմանները, և վեր-
ջապէս ամեն եղանակի երգոց նման-
օրինակները յաջորդաբար գրելով, մե-
կն զմիւսը այնպէս գիւրացուց, որ
կտրծես թէ ամենն ալ միեւնոյն երգի
այլ և այլ հատուածներն են, ինչպէս
և իրօք ալ են. ասոնք ի սկզբան մէկ
կամքանի մը երգերու վրայ փորձ մը
ընողը միւսներուն վրայ լիովին տեղե-
կութիւն մը կրնայ առնուլ:

Երգերու սկզբնաւորութեանց եւ
վերջաւորութեանց համար ալ միեւնոյն
կանանք պահեցինք ինչ որ յուցած է-
ինք մեր Տեսութեանց մէջ. բայց սա
պէտք է ըսենք, որ նմանաձայն երգոց
մէջ առաջին նախադասութեանց կամ
տողերու վերջին մասերը պէտք է ի
բարու յար և նման ըլլան, և ասոնց
մէջէն վանկի կամ բառի աւելորդը
հատուածին և տողին սկիզբը կամ ըս-
կըցան մօտերը կը մնայ, զօրօրինակ:

Որ ըզ նախադրեալն յառաջագոյն
... Որ ի լուսն անճառ ծնողեան

Նահապետացն Աբրահամու:

Աղախին և մայր կենաց և այլն:

Արեգ. արդր. ծագման արուեստիչ առաւտոնայ
Բարձ անձ: Խորոց տեսնող խմատիւք հոգւոյն
Խորհ. անհ. ծածկեալն յազգաց և յախտնից

Նորատեղծեալ բանն յանէից

Սի օ նի որդիք զարթիք

Ողորմած աէր ողորմեա:

Ի յթեւանս հօրքո լուսոյ:

Ինչպէս սոյն համառօտ օրինակնե-
րէն կ'երեւի թէ արձակ և թէ չարիա-
կան երգերու մէջ վերջին մէկ կամ
երկու բառերը և վանկերը իրարու կը
համեմատին, և աւելին ու պակա-
սը սկիզբը կը մնան:

Սոյն բառերու և վանկերու համե-
մատութենէն խաղերու դրութեան
բանի մը կէտերը ըստ բաւականին
լուսաբանեցան, զոր օրինակ:

Վի տեղ, Վի տեղ, Վ տեղ, եւ
այլն:

Շարականի երգոց նախադասու-
թեանց կամ լաւ ևս տողերու ու հա-
տուածներու վերջաւորութեանց մէջ
ալ ուշադրութեան արժանի բան մը
կայ, այն է, երկար վանկերէն յետոյ
մինչ ի վերջ եղած պարզ վանկերուն
թիւը ընդհանրապէս կոծաւ է, զոր
օրինակ:

Մէկ վանկ.

Ասելով: Իմաստիւք հոգւոյն. Եւ
սուրբ կոհսանքն, և այլն:

Երեք վանկ.

Իսկից հօր և հոգւոյն. Աստուած
հարցն մերոց: Ըզ թշնամին խորտա-
կեցիք, և այլն:

Հինգ վանկ.

Այսօր ծնաւ յամուլ յարգանդէ:
Այսօր ցնձան երկնայինքն, զնոյն և
զԱբրահամուն: Բոլորմն ի հօրէ՛ բզ-
հոգին ճշմարիտ, և այլն:

Եթե՞ն վանկ .

Կնքի մատենանու քահանայիցն : Արդար են և սուրբ է քո տէրութիւնը : Մեզայ՝ սղորմեա ինչ ասարւած , և այլն : Ինչ , տասնութիւն և տասնութեք վանկով ալ կը գանուին :

Այս օրինակներն ընդհանուր օրէնք են , մասնաւոր հնգավանդ վերջաւորութիւնը . զարտուղութիւնը այնչափ սակաւ և անսովոր է , որ կարելի է մինչեւ անգամ սխալ համարել . միայն ԴԿ երգերուն մէջ Մնդ . Գ . աւուր օրհնութեան երկրորդ հատուածին և իրեն նման երեք երգոց մէջ քառավանք վերջաւորութիւն մը կայ , որ այն ալ դարձեալ իւր մէջ երեք և հինգ վանկով վերջաւորութեան զարտուղութիւն կը պարունակէ . սոյն քառավանկ վերջաւորութիւնն է .¹ նշաններով , ինչպէս , Մա¹րդասէր փրկիչ , և այլն : Բայց հաւանական է կարծել , որ նոյն քառավանկ վերջաւորութիւններն եւս հնգավանկ ըլլան : այսինքն երկար վանկերը երեք կամ հինգ ոտք աւելցնելու ունենան փոխանակ երկուքի և չորսի , և ասկէ աւելցած մէկ ոտքը միւս չորս վանկին վրայ աւելնալով դարձեալ հնգավանկ վերջաւորութիւն ունենան , որով եւ իրենց մէջ եղած զարտուղութիւնն ալ անհետանալով ընդհանուր կանոնի համաձայնին . վրան զի ձեռագիր շարականաց մէջ սոյն վերնախօսդէրուն վերայ երկու կէտեր նշանակուած են , որ տպագրեայնեան մէջ չկայ : Եռաչափ ու հնգաչափ ոտքերու վրայ տես ՚ի Տեսութիւն խաղից շարականաց , Ժա մանակ հանդէսի յաւելուած երես 155 : (Սոյն վերջի դիտողութիւնը իբր կարծիք միայն յառաջ կը բերենք հոս , վասն զի մենք մեր գրութեան մէջ ներկայ սովորութիւնը յարգած ենք ,

այսպիսի տեղեր քառավանկ վերջաւորութիւնը պահելով) :

Աւելորդ է ըսել որ սոյն ձեռնարկութեան մէջ ըստ կրօնելոյն խորշիցանք սոյն օտարտաի և աւելորդ գեղգեղանքներէն , զորս շատերը սովոր են գործածել , իրարմ տարբեր երգուածներուն յարմարագոյնն ընտրելցինք : Վերջապէս եթէ ներելի է ըսել , աշխատեցանք , և թերեւս մեծ մասամբ յաջողեցանք ալ , ներկայ երգերու մասին աւանդութիւն , տաղաչափութիւն երաժշտութիւն իրարու համաձայնեցնել որչափ որ կարելի էր , պահելով միանգամայն սրբազան աւանդի մը պարտուպատշաճ եղած ամենայն սկիւնածութիւն և հաւատարմութիւն :

Մեր ձեռնարկութեան վրայ այսչափ տեղեկութիւն տալէ զինի , գիտնալով այն դժուարութիւնը որ այսպիսի գործի մը պաշտօնապէս բնութեան և վաւերացման մասին կը դրուուի , ուստի այս դժուարութիւնը գոնէ մասամբ իւր բառնալոյ աղաքաւ կը յայտարարենք ահա որ Կ . Պօլսոյ համար թուականէս սկսեալ մինչեւ երեք ամիս և հեռաւոր տեղերու համար մինչեւ վեց ամիս ժամանակ ուրոշած ենք , որոյ միջոցին կը փափագինք և կը խնդրեմք որ սոյն նիւթին վրայ դիտողութիւն կամ կարծիք ունեցողը և կամ հետաքրքիր եղողը բարեհաճի կիրակի և տօն օրերը ժամը վեցէն մինչեւ ութը , մեր բնակարանը այցելութիւն ընել , և կամ թղթակցիլ , յՈրդագիւղ Նառ սօգաղը թիւ 6 , և կամ ՚ի Պօլիս Օտուն Գաբու ճաստէսի թիւ 465 (այցելութիւնները գոնէ օր մը յառաջ իմաց տալու պայմանաւ) , որով մենք ալ կարող պիտի ըլլամք սոյն նիւթին հմուտ ազգայնոց կարծիքները կարելի եղածին չափ ՚ի մի ամփոփել , և սոյն պայմանաժա

մէն յետոյ թերեւս մէկ քանի մասե-
րը ՚ի լցս ածել ձայնագրութեամբ :
Վստահ ենք որ ամեն անոնք որք այս
պիտի ձեռնարկութեան մը յաջողու-
թեանը կը փախագին , պիտի փութան
ընդունիլ մեր հրաւերը , և պիտի քա-
ջադերեն զմեզ զիմագրաւել այն ար-
գելքներուն որք անբաժան են յայս
տեսակ ձեռնարկութեանց :

Եթէ հնար ըլլար՝ այժմէն իսկ հը-
րատարակութեամբ կը ցուցնէինք մէկ
քանի խնդիրներ և անոնց վրայ կար-
ծիք կը հարցունէինք . բայց ձայնագրու-
թեամբ և խաղերով ըլլալիք գործ մը
մասնաւոր հրատարակմամբ բացայայտ
ցուցնելու համար մեծ դժուարու-
թիւններ գտնուելուն , սոյն յայտա-
բարութիւնը յարմար թուեցաւ մեզ :
Բայց եթէ պէտք ըլլայ , և կամ հրա-
պարակաւ պահանջում մը ըլլայ , մեր
այս անգամ տուած տեղեկութեանց
վրայ քանի մը տեղեկութիւն եւս կը
յաւելցնենք հրատարակութեամբ :

մակորիմք : Բայց նա դարձեալ ՚ի սէր
Աղգին և ՚ի սէր իւր կրօնին և ՚ի ջա-
տագովութիւն եկեղեցւոյ իւր ծանր
և հասուն հասակին չը խնայելով աչ-
խատութիւն յանձն կ'առնու և աւե-
լի լաւ աշխուժով մեր օրացուցի սը-
խաները կը մանրախուզէ , աւելին կը
յապաւէ , պակասը կ'աւելցնէ , թէ
որ չը դտնէ կարկտան կը փակցնէ . որ
պէս զի զմեզ լաւ հրահանգէ : Զար-
մանալի՜ առաքինութիւն և դիւցազ-
նական գործ : Ի հարկ է պատճառ մը
ունի . զի առանց առթի ոչ որ այսբան
կ'առաքինանայ . և նոյն իսկ պատճա-
ռն մեր սոյն խօսքերու մէջ կը նշմա-
րուի :

Իրեն կարծիքն է , ո՞վ կարէ զինքը
բռնաբարել թէ մեք իրեն բարձր հան-
ձարոյ թերակատար աշակերտն ենք ,
դժբաղդաբար կը խոստովանիմք թէ
չեմք : Սոյն յետագայ պատմութիւնը
կը ճշմարտէ ըսածնիս . ցուցամու-
թիւնն մեզ համար չէ , բայց և անձ
նասիրութիւննիս չը ներէր իրեն աշա-
կերտ համարուիլ , որքան ալ թերտո
լինի մեր գիտցածն . ուստի սկիզբն ը-
նենք խօսքերնու՝ ուրկէ արժան է :
Երբ սուրբ Աթոռոյս նորնտիր Եսայի
Սրբազան Պատրիարքը եպիսկոպոսանա-
լու և Աղգին հետ աւետակցելու պատճա-
ռաւ ՚ի Պոլիս և ՚ի Ս . Էջմիածին գնաց ,
նոյն միջոցները Տէր Երեմիա Հօր հետ
կը տեսնուի ու կրտսկարկեն որ զինի
հանելուկական ուսման եղանակը նոյն
սրբաղան Հօր ճանաչած ուղիմ՝ բա-
րեկամին , այն է Զէնծիրձեան Յարու-
թիւնին , որ արդ էֆէնտի է , սորվե-
ցնէ : Այս պայմանաւ որ կատարեալ
աւանդէ , որ նա ալ սուրբ Երուսա-
ղէմ դառնալով հոն օրացոյց հրատա-
րակէ : Նոյն Տէր Հայրն ոսկւոյ ձայն
լսելով յօժարութիւն կը յայտնէր .
իսկ իւր ներսի դաշնագրութեան և

Տ . ԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅ ԵՒ ՍԻԱԼԱՑՈՅՑ ԻՒՐ

Մեծիմաստ և պատկոտելի Տ . Ե-
րեմիա քահանայի մեծաքիրտն սխալա-
ցուցի մասին մեր կողմանէ կանխաւ
չնորհակալութիւն կը յայտնեմք , մաս-
նաւորապէս մեր օրացուցի մասին :
Այս մասին չենք կարծեր , որ նա ըս-
տեղ իբր սուրբ ապերախտ նկատէ .
ինչպէս որ ակներեւ կը տեսնուի , մեք
նորա ցանկալի աշխատութիւնն յար-
գելով զինքը կը պատուենք . բայց նա
կը կարծէ թէ մեր արարքով իրեն շա-
հու աղբիւրները կը խցենք , եւ իւր
ներհուն հմտութեան առաջ կը կա-